

## ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկը՝ հայերը, միշտ հարազատ են մնացել իրենց աներեակայելի հարուստ խոհարարական ավանդույթներին: Հազարամյակներ շարունակ մեր ժողովուրդը բնակվել է միմյանցից կտրված գյուղերում: Արդյունքում մեր խոհանոցն այնքան բազմազան է, որքան հայոց լեզվի բարբառները:

Ցավոք, մեր խոհարարական ավանդույթների ժառանգության մեծ մասը, հատկապես պատմական Արեւմտյան Հայաստանի, մեր մշակույթի այլ ճյուղերի նման անհետացել է ցեղասպանության ժամանակ: Մնացել են ընդամենը մի քանի հայտնի ճաշատեսակներ, որոնք դարձել են հարուստ խոհարարական ժառանգության նմուշները:

Որպես ընտանեկան բաղադրատոմսով պատրաստված ուտեստներ՝ այսօր մեծ տարածում ունեն ընդամենը մի քանի ճաշատեսակներ, եւ քիչ են յուրահատուկ տեղական համային առանձնահատկությունները, որոնք ժամանակին անսահման բազմազանություն եւ խորություն են տվել մեր ազգային խոհանոցին:

«Թուֆենկյան Խարբերդ» ռեստորանում մենք ցանկանում ենք վերածնել հայկական մշակույթի այս կարեւոր մասնիկը վերականգնել մեր խոհարարական ավանդույթը, որպեսզի Դուք կարողանաք լիարժեք գնահատել մեր խոհարարական արվեստը: Միավորելով թարմ մթերքը, Նոր գաղափարները եւ մեր նախնիների խոհարարական դարավոր ակունքները՝ Ձեզ ենք առաջարկում արեւմտահայ դասական ուտեստների մեր ժամանակակից մեկնաբանությունը:

Մեր ճաշացանկը կազմվել է երկարատեւ աշխատանքի արդյունքում եւ մեծ սիրով: Մենք ճանապարհորդել ենք հայկական պատմական գյուղերով եւ ուսումնասիրել տեղական խոհանոցը, փնտրել անհայտ խոհարարական գրքեր եւ գտել երկար ժամանակ անհայտ մնացած բաղադրատոմսեր, որոնք պահպանվել էին միայն մասնավոր խոհարարական նոթատետրերում: Մեզ համար սնունդը մշակույթի կարեւոր եւ կենսական բաղկացուցիչ է, ուստի արեւմտահայկական խոհանոցին Նոր շունչ տալու մեր առաքելությունը շարունակական է: Մենք շարունակում ենք Նոր եւ սեզոնային բաղադրատոմսեր փնտրել եւ համալրել մեր ուտեստների հարուստ ցանկը:

Անկեղծորեն հույս ունենք, որ Դուք ոչ միայն կվայելեք Ձեր ճաշը, այլեւ Նոր բացահայտումներ կանեք հայկական հարուստ խոհանոցում:

## ՆԱԽՈՒՏԵՍՆԵՐ ԵՎ ԱՂՑԱՆՆԵՐ

- **ԿԱՐԿԱՆԴԱԿ** AMD 2000
  - Պանրով
  - Մսով
- **ՆԱԽՈՒՏԵՍՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆԻ** AMD 4000  
Նախուտեստների 5 տեսականի
- **«ՍԱՐՄԱ» ՏՈԼՄԱ** AMD 2300  
Խաղողի տերեւները լցնած բրնձի, ընկույզի, սոխի եւ համեմունքների խառնուրդով
- **ՏԱՊԱԿԱԾ ՍՄԲՈՒԿ ԸՆԿՈՒՅՁՈՎ** AMD 2200
- **ԽՈՐՈՎԱԾ ՍՄԲՈՒԿԻ ԽՅՈՒՍ ԱՆԱՆՈՒԽՈՎ ԵՎ ՆՈՒՇՈՎ** AMD 2400  
Խորոված սմբուկի խյուս, խառնած մածունի, կիտրոնի հյութի եւ սխտորի հետ՝ համեմված բոված նուշով, թարմ անանուխով եւ սեւ պղպեղով
- **ԲԱՄԻԱ ՁԻԹԱՊՏՂԻ ՅՈՒՂՈՎ** AMD 1600  
Ձիթապտղի յուղի մեջ եփած բամիա՝ սոխի, կարմիր պղպեղի, լոլիկի սոուսի եւ չերրի լոլիկի հետ
- **ՈՍՊՈՎ ՔՅՈՒՖԹԱ** AMD 1800  
Կարմիր ոսպ, բլղուր, տեղական համեմունքներ: Մատուցվում է հայկական սալսայով
- **ՏԱՊԱԿԱԾ ԾԻՐԱՆՈՎ ՈՒ ԸՆԿՈՒՅՁՈՎ ԳՆԴԻԿՆԵՐ** AMD 1800  
Ծիրանի, ընկույզի, քերած գազարի հարուստ համային համադրություն
- **«ԻՉ» ԱՂՑԱՆ** AMD 2100  
Բլղուրը տոմատի խիտ հյութի մեջ՝ խառնած տապակած սոխով եւ հայկական պղպեղով

- **ԴԴՄԻԿԻ ԲՅՈՐԵԳ** AMD 1500  
 Մանրեցրած դոմիկ՝ տապակած ձկով,  
 պանրով եւ նանայով
- ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՇԻՄԻ** AMD 2600  
 Թարմ իշխանի հում կտորներ՝  
 կիտրոնով, ձիթապտղի յուղով,  
 հայկական պղպեղով եւ սամիթով
- ԿՈՏԵՄՈՎ, ԽՈՋԱՊՈՒԽՏՈՎ** AMD 2900  
 ԵՎ «ՌՈԿՖՈՐ» ՊԱՆՐՈՎ ԱՂՑԱՆ  
 Կոտեմ, «Ռոկֆոր» պանիր, տապակած  
 խոզապուխտ, չերրի լոլիկ եւ գլուխ սոխ՝  
 համեմված քունջութի սերմով ու սոուսով
- ԱՂՑԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆ»** AMD 2500  
 Տապակած բաստուրմա, սունկ,  
 կտրատած հավի կրծքամիս եւ  
 խոզապուխտ: Մատուցվում է  
 մածոնով եւ թթվասերով
- **ԼՈԼԻԿՈՎ, ՎԱՐՈՒՆԳՈՎ** AMD 1800  
 ԵՎ ՊԱՆՐՈՎ ԱՂՑԱՆ  
 Կտրատած լոլիկ եւ վարունգ,  
 հայկական պանիր, թարմ կանաչի՝  
 համեմված կիտրոնի հյութով
- **ՔԱՄԱԾ ՄԱԾՈՒՆՈՎ** AMD 2300  
 ԵՎ ՉԻՓՍՈՎ ԱՂՑԱՆ  
 Կտրատած լոլիկ, ձիթապտղով եւ  
 սխտորով մածոն, որը մատուցվում է  
 չորացրած եւ համեմված լավաշով
- **ԿԱՆԱԶ ԼՈԲՈՎ ԱՂՑԱՆ** AMD 1600  
 Կանաչ լոբի, լոլիկ, սխտոր,  
 կիտրոնի հյութ եւ սամիթ
- **ԱՂՑԱՆ «ՄԱՐԱՇ»** AMD 2400  
 Կտրատած նարինջ, տանձ/խնձոր,  
 նեխուր, ընկույզ եւ կիտրոն
- **ՀՈՒՄՈՒՍ** AMD 1500  
 Սիսեռ, թահին եւ սխտոր համեմված  
 կիտրոնի հյութով եւ կարմիր պղպեղով

- **“ԱՅԼԱԶԱՆ”** AMD 2000  
Տապակած սմբուկ, կանաչ պղպեղ եւ սոխ՝ համեմված մաղադանոսով, համեմով եւ կիտրոնով
- **ՍԵԶՈՆԱՅԻՆ ԿԱՆԱԶ ԱՂՑԱՆ** AMD 1500  
Կտրատած հազարի տերեւներ եւ հայկական բանջարեղեն՝ թարմ կիտրոնի հյութով եւ ձիթայուղի սոուսով
- **ԹԹՎԻ ՏԵՍԱԿԱՆԻ** AMD 1800
- **ՊԱՆՐԻ ՏԵՍԱԿԱՆԻ** AMD 4000  
Հայկական պանրի տեսականի «Լոռի», այծի, ոչխարի, «Չեչիլ» եւ ծխեցրած կամ, առկայության դեպքում՝ սեզոնային ընտրանի
- **ԱՄԱՌԱՅԻՆ ՓՈՒՆԶ** AMD 3000  
Լոլիկ, վարունգ, կանաչիներ եւ կծու պղպեղ
- **ԿԱՆԱԶԻՆԵՐԻ ՓՈՒՆԶ** AMD 800

## ԱՊՈՒՐՆԵՐ

- **ՓԻԹԻ ԳԱՌԱՆ ԿԱՄ ՏԱՎԱՐԻ ՄՍՈՎ** AMD 3000  
Ավանդական կովկասյան մսապուր՝ գառան կամ տավարի մսով ըստ Ձեր նախընտրության, սխեռով, լոլիկով, կարտոֆիլով եւ անանուխով
- **ՄԱԾՆԱՊՈՒՐ ԿՈԼՈԼԱԿՈՎ** AMD 1400  
Բրնձով եւ կոլոլակով թանապուր: Մատուցվում է չորացրած անանուխով
- **ՄՊԱՆԱԽՈՎ ԵՎ ՀԱՎՈՎ ԱՊՈՒՐ** AMD 2000  
Թեթեւ ապուր՝ սպանախով, հավով ու բլդուրով
- **ՍՆԿՈՎ ԽՅՈՒՍ-ԱՊՈՒՐ** AMD 2200
- **ՍՊԱՍ (ՄԱԾՆԱՊՈՒՐ)** AMD 1000  
Մածունով եւ ձավարով ավանդական ապուր



ՔՈՒՍԱԿԵՐՆԵՐԻ ՎԵԳԱՆ

Գները չեն ներառում 10% սպասարկման վճարը

- ԿԱՐՄԻՐ ՈՍՊՈՎ ԵՎ ԲՐՆՁՈՎ ԱՊՈՒՐ** AMD 1500

Կարմիր ոսպ եւ բրինձ, եփված բանջարեղենային արգանակով, բանջարեղենով, սոխով եւ սխտորով: Մատուցվում է մանրեցրած՝ համեմված քիմյոնով եւ կիտրոնով
- ՈՍՊՈՎ ԵՎ ԲԱՆՋԱՐԵՂԵՆՈՎ ՃԱՇ** AMD 2500

Ոսպ, եփված գազարի, քաղցր պղպեղի, լոլիկի եւ նեխուրի հետ՝ համեմված մաղադանոսով
- ԼՈՒԻԿՈՎ ՍԱՌՆԱՊՈՒՐ** AMD 1200

Լոլիկով, կանաչ պղպեղով, սոխով, սխտորով եւ քացախով պատրաստված խիտ ապուր: Մատուցվում է սառը

## ՓԼԱՎՆԵՐ ԵՎ ԽԱՎԱՐՏՆԵՐ

½ բաժին / մեկ բաժին

- ՍՆԿՈՎ, ՆԱՃԱՐՈՎ ՓԼԱՎ** AMD 1200/2000

Նաճարով փլավ՝ տապակած սոխով եւ սնկով
- ԿԱՆԱԶ ԼՈՒԻ ԶԻԹԱՊՏՂԻ ՅՈՒՂՈՎ** AMD 2000

Թարմ կանաչ լոբի եփած ձիթապտղի յուղի մեջ՝ սոխով, սխտորով եւ աղացած կարմիր պղպեղով, համեմված սամիթով
- ԲՐՆՁՈՎ ՓԼԱՎ ԿԱՆԱԶ ԼՈՒԻ ԵՎ ՍԱՄԻԹՈՎ** AMD 600/1000
- ՊՐԱՍԸ ԶԻԹԱՊՏՂԻ ՅՈՒՂՈՎ** AMD 2000

Պրասը՝ պատրաստված սոխով ձիթապտղի յուղի մեջ, թարմ կիտրոնի հյութով
- ԿԱՐՏՈՖԻԼ** AMD 600/1000

Կարտոֆիլ ըստ ձեր ընտրության՝ տապակած, ջեռոցում եփված, այուրե, լցունված կամ տնային եղանակով պատրաստված
- ԲԱՆՋԱՐԵՂԵՆ** AMD 1500

Բանջարեղեն ըստ ձեր ընտրության՝ տապակած, խորոված կամ գրիլի վրա տապակած



ԲՈՒՍԱԿԵՐՆԵՐԻ ԿԵԳԱՆ

Գները չեն ներառում 10% սպասարկման վճարը

# ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՏԵՍՆԵՐ

Մսեղենի եւ ձկնեղենի մեր ամբողջ տեսականին թարմ է եւ տեղական

## ՓՈՌՈՒՄ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՈՒՏԵՍՆԵՐ

● **ՊԱՆՐՈՎ ԼԱՋՄԱՋՈ** AMD 1000  
Պանիրների խառնուրդով  
եւ չորացրած անանուխով

**ՄՍՈՎ ԼԱՋՄԱՋՈ** AMD 1000  
Աղացած տավարի միս,  
բանջարեղեն եւ համեմունքներ  
բարակ խրթխրթան հացի վրա

● **ՍՈՒԲՈՐԵԳ** AMD 3500  
Շերտավորված խմոր՝  
հայկական պանրով,  
կարագով եւ մաղադանոսով

**ՄԱՆԹԻ** AMD 3500  
Աղացած տավարի մսով եւ  
համեմունքներով լցունված խմոր:  
Մատուցվում է սխտորով  
եւ մածունով

● **ԱՐԻՇՏԱ ՍՊԱՆԱԽՈՎ** AMD 2000  
**ԵՎ ԾԱՌԻ ՍՆԿՈՎ**  
Արիշտա, ծառի սունկ եւ թարմ անանուխ:  
Մատուցվում է մածունով եւ սխտորով

## ԹՈՂՆԱՄՍՈՎ ՈՒՏԵՍՆԵՐ

**ՀԱՎՈՎ ԽՈՒՆՈՐԲ** AMD 3500  
Անոսկոր հավի միս՝ պատրաստված  
սոխով, նռան սոուսով եւ սալորաչրով:  
Մատուցվում է մաղադանոսով եւ սամիթով

**ՀԱՎԸ ՆԱՐՆՋԻ ԿԾՈՒ ՍՈՌՈՒՍՈՎ** AMD 3800  
Նարնջով եւ քաղցր համեմունքներով  
պատրաստված հավ: Մատուցվում է  
մածունի եւ անանուխի սոուսով



Գները չեն ներառում 10% սպասարկման վճարը

ՏԱՊԱԿԱ «ՄՈՇԱԲՈՒՅՐ»  
Սպիտակ գինով, բամբակյա, մոշով,  
ընկույզով եւ սեզոնային կանաչիով  
պատրաստած հավ

AMD 3000

ՏԱԿԱՐԻ ՄՍՈՎ ՈՒՏԵՍՆԵՐ

ՔՅՈՒՖԹԱ «ԽԱՐԲԵՐԴ»  
Աղացած տավարի մսով եւ  
բլդուրով պատյան լցունված  
մսի, ընկույզի, սոխի եւ  
համեմունքների խառնուրդով

AMD 4000

ԽԱՂՈՂԻ ԹՓՈՎ ՏՈԼՄԱ  
Հայկական ավանդական  
ուտեստի յուրահատուկ  
տարբերակ: Խաղողի  
տերեւներ՝ լցունված մանր  
կտրատած տավարի մսով,  
բլդուրով, սոխով եւ համեմունքներով,  
եփված մրգահյութի մեջ

AMD 2800

ԲՐՆՁՈՎ, ՉԱՄԻՉՈՎ  
ԵՒ ՄՍՈՎ ՓԼԱՎ  
Բրնձով եւ չամիչով փլավ՝ տավարի  
աղացած մսի շերտերով  
եւ վրայից լցված արեւծաղկի  
տապակած սերմերով

AMD 2500

ՏԱԿԱՐԻ ՄԻՍ ՍԵՎ ՍԱԼՈՐԱՉՐՈՎ  
ԵՎ ԳԻՆՈՒ ՍՈՈՒՍՈՎ  
Տավարի խճողակ՝ լցունված  
սեւ սալորաչրով: Մատուցվում է  
կարմիր գինու սոուսով

AMD 5200

Մատուցվում է տապակած բազկաճավով  
կամ բրնձով, կանաչիներով եւ  
շաֆրանով փլավով

«ՄՈՒՍԱԿԿԱ»  
Շերտերով կտրատած եւ  
տապակած սմբուկ, համեմունքներով  
պատրաստված աղացած միս՝  
եփված ջեռոցում, "Բեշամել" սոուսով

AMD 3000

ԳԱՌՆԻ ՅԱՐԱԽ  
Տապակած սմբուկ՝ լցունված աղացած  
մսի խճողակով (տավարի միս, բուլղ. պղպեղ,  
սոխ) եւ պատրաստված լոլիկի սոուսով

AMD 2500



Գները չեն ներառում 10% սպասարկման վճարը

**ՏԱՊԱԿԱԾ ՔՅՈՒՖԹԱ**

AMD 3500

Տապակած տավարի եւ գառան մսից  
գնդիկներ՝ պատրաստած սոխով,  
մաղադանոսով եւ համեմունքներով

Մատուցվում է ձիթապտղի յուղով պատրաստած  
պրասով կամ կարտոֆիլով՝ ըստ ձեր ընտրության

**ԳԱՌԱՆ ՄՍՈՎ ՈՒՏԵՍՆԵՐ**

**ԹԱՎԱՅԻ ՄԵՋ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ  
ԳԱՌԱՆ ՄԻՍ**

AMD 3300

Գառան միս, եփված լոլիկի հյութով,  
սոխով եւ համեմունքներով

**ԽԱՐԲԵՐԴԻ ԲՈՒՂԼԱՄԱ**

AMD 3900

Գառան միսը բանջարեղենով  
եւ լոլիկի հյութով:  
Պատրաստվում է ջեռոցում

**ԳԱՌԱՆ ԽԱՇԼԱՄԱ**

AMD 3900

-Նռան հյութով  
Գառան միսը եփված իր  
արգանակի եւ նռան հյութի մեջ  
-Սպիտակ գինու մեջ  
Գառան միսը եփված իր  
արգանակի եւ սպիտակ գինու մեջ

**ՁԿՈՎ ՈՒՏԵՍՆԵՐ**

**ՍԵՎԱՆԻ ԻՇԽԱՆՈՎ ՃԱՇ**

AMD 2000

Սեւանի թարմ իշխանով, կարտոֆիլով,  
ձիթապտղով եւ այլ բանջարեղեններով  
պատրաստված հարուստ ճաշ

**ԻՇԽԱՆԻ ՖԻԼԵ ԹԹՎԱՍԵՐՈՎ**

AMD 4400

Տապակած իշխան՝ մսկի  
եւ թթվասերի սոուսով՝  
զարդարված սամիթով  
եւ կարմիր պղպեղով

Մատուցվում է՝ բրնձով, կանաչ լոբով  
եւ սամիթով փլավով՝ կամ տապակած  
բազկաճավով



Գները չեն ներառում 10% սպասարկման վճարը



ԻՇԽԱՆԻ ՖԻԼԵ ԼԱՎԱՇՈՎ  
Իշխանի ֆիլե, պատրաստվում է  
լավաշի մեջ՝ սեզոնային  
բանջարեղենով եւ պանրով

AMD 4400

ԻՇԽԱՆԻ ՖԻԼԵ ԾԽԵՅՐԱԾ  
ԿԱՐՏՈՖԻԼԻ ԽՅՈՒՍՈՎ  
Տապակած իշխան՝ սպիտակ  
սոուսով եւ թարմ կանաչիներով

AMD 4400

ԻՇԽԱՆԻ ԽՈՐՈՎԱԾ  
Կարմիր պղպեղով եւ  
տոմատի մածուկով համեմված  
խորոված իշխան

AMD 4600

### ԽՈՐՈՎԱԾ

ՆԱՎԻ ԽՈՐՈՎԱԾ  
Կիտրոնի եւ համեմունքների մեջ  
մարինացված հավի կրծքամիս՝  
խորոված պղպեղով եւ սոխով

AMD 3000

ՆՈՐԹԻ ԽՈՐՈՎԱԾ  
Թարմ կանաչիով եւ սոխով  
համեմված՝ խորոված հորթի միս

AMD 4900

ԽՈՐՈՎԱԾ ԳԱՌԱՆ ՉԱԼԱՂԱԶ

AMD 4200

ԽՈԶԻ ԽՈՐՈՎԱԾ  
Թարմ կանաչիով եւ սոխով  
համեմված՝ խորոված խոզի միս

AMD 4200

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՆԱՆՈՑ

## ԱՂՑԱՆՆԵՐ ԵՎ ՆԱԽՈՒՏԵՍՆԵՐ

ԱՂՑԱՆ «ԿԵՍԱՐ» AMD 2500  
Հազարի տերեւներ տապակած  
բեկոնով, պարմեզանով եւ հացի  
կտորներով: Համեմված է ձիթապտղի  
ձեթով, կիտրոնով եւ մանանեխով

## ՊԱՍՏԱ

- ՊԵՆՆԵ ԱԼ՝ԱՌԱԲԻԱՏԱ AMD 2800  
«Պեննե» մակարոնեղեն՝  
լոլիկի կծու սոուսով
- ԹԱՐՄ ԼՈՒԻԿՈՎ ՍՊԱԳԵՏԻ AMD 2800  
Սպագետի՝ չերրի լոլիկով  
եւ ռեհանի սոուսով
- ՏՈՐՏԻԼԻՈՆԻ ՍԵՋՈՆԱՅԻՆ  
ՄՆԿՈՎ AMD 2800  
Տորտիլիոնի տեսակի  
պաստա՝ սեզոնային սնկով,  
սխտորով, լոլիկով, մաղադանոսով  
եւ օրեզանոյի սոուսով

## ՀԻՄՆԱԿԱՆ ՃԱՇԱՏԵՍԱԿՆԵՐ

ՀԱՎԻ ԿՐԾՔԱՄԻՍ ԿԻՏՐՈՆԻ  
ՍՈՈՒՍՈՎ AMD 3500

ԲԻՑ ԱՏՐՈԳԱՆՈՑ AMD 4200

ԽՈՋԻ ՄՍԻ ՄԵԴԱԼԻՈՆ  
ՀԱՏԱՊՏՂԻ ՍՈՈՒՍՈՎ AMD 4200  
Գրիլում եփված խոզի միս:  
Մատուցվում է եփված  
բանջարեղենով եւ սեզոնային  
հատապտուղներից  
պատրաստված սոուսով



ԲՈՒՍԱԿԵՐՆԵՐԻ ԿԵԳԱՆ

Գները չեն ներառում 10% սպասարկման վճարը

ՍԹԵՅՔ

ԹԵՆԴԵՐԼՈՅՆ ՍԹԵՅՔ AMD 6000

Ընտրեք սթեյքի հետ մատուցվող մեր սոուսների տեսականուց՝ հայկական խորովածի սոուս, «Տերիակի» սոուս, «Չիմիչուրի» սոուս, «Բլյու չիզ» սոուս

ԲՈՒՐԳԵՐ

ՏԱՎԱՐԻ ՄՍՈՎ ԲՈՒՐԳԵՐ

- Կլասիկ AMD 1800
- Բեկոնով AMD 2200
- Կրկնակի պանրով AMD 2200

ՀԱՎԻ ՄՍՈՎ ԲՈՒՐԳԵՐ

- Կլասիկ AMD 1800
- Կրկնակի պանրով AMD 2000

ԲՈՒՍԱԿԵՐՆԵՐԻ

- -Կլասիկ AMD 1800
- -Պանրով AMD 2000

ՔԼԱԲ ՍԵՆԴՎԻՉ AMD 2500

Յուրաքանչյուր սենդվիչ նաեւ ներառում է լոլիկ, մարինացված վարունգ, սոխ, հազար, պանիր, խորովածի սոուս եւ տնական մայոնեզ: Եթե ցանկանում եք հեռացնել որեւէ բաղադրամաս, խնդրում ենք դիմել Ձեր մատուցողին

Բուրգերը մատուցվում է հետեւյալ սոուսներով՝ խորովածի սոուս, կետչուպ եւ սխտորով համեմված պանրի սոուս



Գները չեն ներառում 10% սպասարկման վճարը

